ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2016
02.2016
03.2016
04.2016
05.2016
06.2016
07.2016
Հուլիս
08.2016
09.2016
10.2016
11.2016
12.2016

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 23-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2016

Հուլիս

թիվ 7 (215)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

4 «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-105-Ն ՀՀ օրենքը

19 «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-108-Ն ՀՀ օրենքը

20 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-110-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

26 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի որոշ մասնաճյուղեր և «Չարենցավան» ներկայացուցչության գործունեության դադարեցումը թույլատրելու, «Արարատբանկ» ԲԲԸ-ի որոշ մասնաճյուղեր գրանցելու, ինչպես նաև 2 արտարժույթի փոխանակման կետերի, 2 ՓԲԸ-ների, 1 գրավատան նկատմամբ տուգանք կիրառելու, 1 գրավատան, 2 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու հանձնարարականով

27 ՀՀ ԿԲ խորհրդի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի համատեղ որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի մայիսի 5-ի թիվ 106-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի մայիսի 14-ի թիվ 302-Ն հրամանով հաստատված համատեղ որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»

29 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 104-Ն որոշումը «Հարկադիր կատարողի կողմից պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում պարտապանի ունեցած դրամական միջոցների վրա արգելանք դնելու նպատակով բանկերին ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների ձևերը» սահմանելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 520-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին»

37 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 105-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի ապրիլի 8-ի թիվ 79-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

39 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Սնանկության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2-րդ մասով.

«2.2. Պարտապանն իրավունք ունի դիմելու դատարան կանխատեսվող սնանկության դեպքում, երբ ակնհայտ է, որ առաջանալու են սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 2.1-ին կետերով նախատեսված՝ պարտապանի սեփական սնանկությունը ճանաչելու հիմքերը:»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 4. Սնանկության գործերի առարկայական ընդդատությունը

1. Սնանկության գործերի վարումն իրականացվում է ընդհանուր իրավասության դատարաններում (այսուհետ՝ դատարան): Դատարանում սնանկության գործերը վարվում են սնանկության գործեր քննող մասնագիտացված դատավորի կողմից միանձնյա:

2. Սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում:»:

Հոդված 4. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը՝

1) «սնանկությունը ճանաչելու» բառերից հետո լրացնել «կամ սնանկության վտանգի» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ «է» և «ը» ենթակետերով.

«է) սնանկության վտանգի մասին դատարան ներկայացվող դիմումի և կից փաստաթղթերի պատճենները բոլոր պարտատերերին ուղարկելու մասին ապացույցները, սնանկության գործով կառավարչի վերաբերյալ առաջարկը.

ը) սնանկության վտանգի դիմումի դեպքում՝ սույն օրենքի պահանջներին համապատասխան կազմված ֆինանսական առողջացման ծրագիրը:»:

Հոդված 5. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 14. Սնանկության կամ սնանկության վտանգի վերաբերյալ դիմումի ընդունումը մերժելը».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Դատավորը մերժում է սնանկության վտանգի դիմումը վարույթ ընդունել՝

ա) սույն հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով նախատեսված դեպքում.

բ) եթե առկա չեն սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2-րդ կետով նախատեսված հիմքերը:»:

Հոդված 6. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 15. Սնանկության կամ սնանկության վտանգի վերաբերյալ դիմումի վերադարձնելը».

---

[*] *ՀՀՊՏ 2007 N 7 (531), 31.01.07:*

[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2016 թվականի հունիսի 17-ին (ՀՀՊՏ N 54 (1234), 13.07.16):

2) 1-ին մասը «սնանկության» բառից հետո լրացնել «կամ սնանկության վտանգի» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Դատավորը վերադարձնում է սնանկության վերաբերյալ դիմումը, եթե պարտապանը ներկայացրել է սնանկության վտանգի մասին դիմում, բացառությամբ սույն օրենքի 15.6-րդ հոդվածով նախատեսված դեպքի:»:

Հոդված 7. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին գլխով.

«Գլուխ 2.1

Սնանկության վտանգի վարույթը

Հոդված 15.1. Սնանկության վտանգի դիմումի քննության կարգը

1. Դատարանը պարտապանի կողմից ներկայացված սնանկության վտանգի դիմումի քննությունն իրականացնում է սույն օրենքով նախատեսված՝ սնանկության վարույթի կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն գլխի դրույթներով:

Հոդված 15.2. Սնանկության վտանգի վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելը

1. Սույն օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված սնանկության վտանգի դիմումը դատավորը այն ստանալու օրն ընդունում է վարույթ և նշանակում դատական նիստ մեկամսյա ժամկետում, եթե առկա չեն սույն օրենքի 14-րդ և 15-րդ հոդվածներով սահմանված՝ սնանկության վտանգի դիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

2. Դիմումը վարույթ ընդունելու և դատական նիստ հրավիրելու մասին դատավորը կայացնում է որոշում: Դիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կառավարիչ է նշանակում կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից սույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված թեկնածուին:

3. Դատարանը սնանկության վտանգի վերաբերյալ դիմումի վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկում է պարտապանին, պարտապանի կողմից դիմումում ներկայացված պարտատերերին և կառավարչին:

Հոդված 15.3. Պարտապանի սնանկության վտանգի դիմումի քննարկումը

1. Դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պարտապանի, պարտատերերի կամ կառավարչի չներկայանալն արգելք չէ պարտապանի սնանկության վտանգի դիմումի քննության համար:

2. Ֆինանսական առողջացման ծրագիրը քննարկելու (լրամշակելու, փոփոխելու և այլն) նպատակով պարտատիրոջ միջնորդությամբ դատարանը կարող է երկարաձգել դիմումի քննարկումը մինչև 90 օր ժամկետով:

3. Դատական նիստում դիմումի, ինչպես նաև առկայության դեպքում՝ պարտատերերի առարկությունների և առաջարկությունների քննարկման արդյունքներով դատարանը կայացնում է վճիռ՝ պարտապանի սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին, եթե պարտապանի ֆինանսական առողջացման ծրագիրը համապատասխանում է սույն օրենքի պահանջներին, առկա է ֆինանսական առողջացման ծրագրում առկա տեղեկությունների արժանահավատության և ծրագրի կատարման հավանականության վերաբերյալ կառավարչի դրական եզրակացությունը, և

1) պարտատերերը միաձայն համաձայնություն են տվել պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրին.

2) պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրին հավանություն են տվել պարտապանի նկատմամբ պահանջների ընդհանուր ծավալով առնվազն 60 տոկոս պահանջի իրավունք ունեցող պարտատերերը, առկա է կառավարչի և պարտապանի համաձայնությունը, և պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված է ծրագրին համաձայնություն չտված պարտատերերի պահանջների բավարարում առնվազն այն չափով և ժամկետով, ինչը պարտատերերը ողջամտորեն կարող էին ստանալ պարտապանի լուծարման դեպքում:

4. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված է ապահովված պարտատիրոջ ապահովված իրավունքի առարկայի օգտագործումը, դատարանը կայացնում է վճիռ պարտապանի սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին, եթե ապահովված պարտատիրոջը տրամադրվել է համարժեք պաշտպանություն (հոդված 41), որի վերաբերյալ կնքվել է պայմանագիր:

5. Դատական նիստում դիմումի քննարկման արդյունքներով դատարանը կայացնում է վճիռ պարտապանի սնանկության վտանգի դիմումը մերժելու մասին, եթե դրա բավարարման համար սույն օրենքով նախատեսված հիմքերն առկա չեն:

6. Պարտապանի սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին կամ դիմումը մերժելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Պարտապանի սնանկության վտանգի դիմումը բավարարելու կամ մերժելու մասին վճիռը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով վճիռը կայացնելու օրվանից 15-օրյա ժամկետում:

Հոդված 15.4. Պարտապանի սնանկության վտանգի վերաբերյալ դիմումը բարելավելու հետևանքները

1. պարտապանի սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանը՝

1) պարտապանի սնանկության վտանգի վերաբերյալ դիմումը բավարարելու և կառավարիչ նշանակելու մասին անհապաղ տեղեկացնում է՝

ա) պարտապանի պետական գրանցումն իրականացնող պետական մարմնին.

բ) անշարժ և պետական գրանցման ենթակա այլ գույքի (իրավունքների) պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններին.

գ) այն հարկային մարմիններին, որտեղ պարտապանը հաշվառված է.

դ) մաքսային պետական մարմիններին.

ե) Կենտրոնական բանկին՝ Հայաստանի Հանրապետության բանկերին և այլ վարկային կազմակերպություններին և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիային, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային բյուրոներին ծանուցելու համար.

զ) դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը.

է) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններին ծանուցելու համար.

ը) պարտապանին լիցենզիա տված պետական մարմնին (մարմիններին), եթե դիմումում առկա է տեղեկատվություն լիցենզիա ունենալու մասին.

թ) աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր պետական մարմնին:

Սույն կետով նախատեսված տեղեկացումն ուղարկվում է գրավոր կամ առանձին գերատեսչությունների հետ համաձայնեցված կարգով, այդ թվում՝ էլեկտրոնային հաղորդակցության միջոցների գործադրմամբ.

2) կառավարչին պարտավորեցնում է ոչ ուշ, քան սնանկության վտանգի դիմումը բավարարելու մասին վճռի ուժի մեջ մտնելու պահից հինգ օրվա ընթացքում պարտապանի սնանկության վտանգի դիմումի բավարարման մասին տեղեկություններ հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ պարտապանի հաշվին, և փակցնել դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում:

2. Պարտապանի սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից և պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի գործողության ժամանակահատվածում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով[***] նախատեսված դեպքերում ստուգման կամ ուսումնասիրության իրականացման համար դատարանի որոշում չի պահանջվում:

[***] *ՀՀՊՏ 1998 N 22 (55), 21.09.98:*

3. Պարտապանի սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կասեցվում են պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալում մասնակցություն ունեցող անձանց՝ օրենքով և պարտապանի կանոնադրությամբ սահմանված գույքի կառավարման և տնօրինմանը վերաբերող այն լիազորությունները, որոնք պայմանավորված են այդ մասնակցությամբ: Նշված լիազորությունների իրականացումը կարող է թույլատրվել դատարանի որոշմամբ՝ ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում:

4. Սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պարտապանի ղեկավարը գործում է կառավարչի հսկողության ներքո, իսկ պարտապանի կառավարման մարմինների՝ պարտապանի գույքը կառավարելու և տնօրինելու իրավազորությունները կասեցվում են ֆինանսական առողջացման ծրագրի գործողության ժամկետով: Պարտապանի ղեկավարին արգելվում է պարտապանի գույքը տնօրինել կամ պարտապանի համար գույքային պարտավորություն առաջացնող ցանկացած գործողություն կատարել առանց կառավարչի համաձայնության:

Հոդված 15.5. Պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը (մորատորիումը) սնանկության վտանգի վարույթում

1. Սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝

1) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը այլ կերպ, քան ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված կարգով.

2) արգելվում է պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով որևէ քաղաքացիական կամ վարչական գործի վարույթ սկսելը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մասով.

3) կարճվում է սնանկության վտանգի վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով այն քաղաքացիական գործի վարույթը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մասով:

Սույն կետում նշված քաղաքացիական գործը կարող է վերսկսվել սնանկության վտանգի վարույթի ավարտից հետո.

4) կասեցվում է դրամական պարտավորությունների և պարտադիր վճարումների, ներառյալ՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկման, վճարման կամ գանձման ենթակա տուժանքների և այլ ֆինանսական պատժամիջոցների, ինչպես նաև վճարման ենթակա տոկոսների հաշվարկումը, վճարումը կամ գանձումը.

5) կարճվում են գույքային բռնագանձումներով և հայցի ապահովման բոլոր կատարողական վարույթները:

2. Մորատորիումի գործողությունը չի տարածվում՝

1) ալիմենտների բռնագանձման վրա.

2) ի ապահովումն պարտապանի պարտավորությունների կատարման՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձանց կողմից այդ երաշխիքի կամ երաշխավորության գծով դրամական կամ այլ բավարարում տալու կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա.

3) սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռը կայացնելուց հետո ընկած ժամանակահատվածում պարտապանի ստանձնած պարտավորությունների վրա.

4) ապահովված իրավունք ունեցող պարտատիրոջ ապահովված իրավունքի առարկայի վրա, եթե դատարանը սույն օրենքով սահմանված կարգով պարտատիրոջը թույլատրել է դրա իրացումն արտադատական կարգով: Ապահովված իրավունքի առարկայի արտադատական կարգով իրացման նկատմամբ կիրառվում են սույն օրենքի 39.1-ին և 39.2-րդ հոդվածներով սահմանված կարգավորումները:

3. Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր պարտապանի սնանկության վտանգի վերաբերյալ դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից ֆինանսական և այլ բնույթի հաշվետվություններ շարունակում է ներկայացնել պարտապանի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը և կրում է դրանք չներկայացնելու կամ ոչ պատշաճ ներկայացնելու համար օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությունը:

4. Մորատորիումը շարունակվում է մինչև տվյալ սնանկության վտանգի վարույթով ֆինանսական առողջացման ծրագրի ավարտի օրը:

Հոդված 15.6. Պարտապանին սնանկ ճանաչելը սնանկության վտանգի դիմումի հիման վրա

1. Եթե սնանկության վտանգի դիմումի քննարկման արդյունքում պարզվում է, որ պարտապանի մոտ առկա են սույն օրենքին համապատասխան պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերը, ապա դատարանը կարող է սնանկ ճանաչել պարտապանին, եթե պարտապանը համապատասխան դիմում է ներկայացնում:

Հոդված 15.7. Ֆինանսական առողջացման ծրագրի պարտադիր պայմանները

1. Սույն օրենքով նախատեսված պայմաններից բացի, սնանկության վտանգի վարույթում ներկայացվող պարտապանի ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներառի նաև՝

1) կառավարչի լիազորությունները.

2) պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի իրականացումը ֆինանսավորող անձի պահանջների արտահերթ բավարարման պայման, ընդ որում՝ այդ պահանջին պետք է տրվի մնացած բոլոր պարտատերերի պահանջների, կառավարչի վարձատրության, վարչական ծախսերի նկատմամբ գերակայություն՝ սույն օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին համապատասխան:

Հոդված 15.8. Ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցումը

1. Սույն օրենքով նախատեսված ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման հիմքերի առկայության դեպքում դատարանը կառավարչի միջնորդությամբ վաղաժամկետ դադարեցնում է ֆինանսական առողջացման ծրագիրը և վճիռ է կայացնում պարտապանի սնանկության վտանգի վարույթն ավարտելու մասին:

Հոդված 15.9. Ֆինանսական առողջացման ծրագրի ավարտը

1. Եթե սույն օրենքով սահմանված կարգով սնանկության վտանգի վարույթով ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվությունը դատարանը մերժում է, ապա վճիռ է կայացվում սնանկության վտանգի վարույթն ավարտելու մասին:»:

Հոդված 8. Օրենքի 16-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «կամավոր» բառից հետո լրացնել «և հարկադրված» բառերով, իսկ վերնագրի «դիմումի» բառը փոխարինել «դիմումների» բառով.

2) 1-ին մասի «պարտապանն առերևույթ անվճարունակ է» բառերը փոխարինել «առկա են սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կամ 2.1-ին կետով կամ 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերը» բառերով.

3) 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հարկադրված սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 15 օրվա ընթացքում, դատավորը նշանակում է դատական նիստ, որին հրավիրվում են պարտապանը և դիմումում նշված պարտատերերը:»:

Հոդված 9. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Հարկադրված սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, պարտապանը պարտավոր է դատարան ներկայացնել սույն օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը և կրում է դրանք չներկայացնելու պատճառով առաջացող իրավական հետևանքների ռիսկը:».

2) 3-րդ մասը «ծախսերը» բառից հետո լրացնել «և վճարել ժամանակավոր կառավարչի վարձատրությունը» բառերով:

Հոդված 10. Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը «կանոնադրությամբ սահմանված» բառերից հետո լրացնել «գույքի կառավարման և տնօրինմանը վերաբերող» բառերով:

Հոդված 11. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.1-ին հոդվածով.

«Հոդված 20.1. Սնանկության գործով առանձին պահանջների քննության կասեցման հիմքերը և կարգը

1. Սնանկության գործի վարույթն առանձին պարտատերերի պահանջների մասով կարող է կասեցվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով[****] նախատեսված՝ կասեցման հիմքերի առկայության դեպքում, եթե այդ իրավակարգավորումները կիրառելի են սնանկության վարույթում առանձին պահանջների քննության նկատմամբ:

2. Առանձին պահանջների մասով վարույթի կասեցումը չի ընդհատում սնանկության վարույթի ընթացքը:

3. Առանձին պահանջի քննությունը կասեցնելու դեպքում հետագա վարույթի ընթացքում նույն հերթի մնացած պահանջները բավարարելուց հետո կասեցված պահանջի չափի համամասնությամբ դրամական միջոցներ են սառեցվում սնանկության հատուկ հաշվին: Վարույթը կասեցնելու հիմքը վերանալուց և պահանջը հաստատվելուց հետո դատարանի որոշմամբ սնանկության հատուկ հաշվին սառեցված դրամական միջոցները փոխանցվում են պարտատիրոջը: Եթե պահանջի քննության կասեցման հիմքերը վերանալուց հետո կասեցված պահանջը չի հաստատվում, ապա այդ հիմքով սնանկության հատուկ հաշվին սառեցված դրամական միջոցները բաշխվում են սույն օրենքով սահմանված կարգով՝ դատարանի որոշման հիման վրա:

4. Այն պարտատերը, որի պահանջի քննությունը կասեցվել է, կարող է մասնակցել պարտատերերի ժողովներին միայն խորհրդակցական ձայնի իրավունքով: Պահանջի քննության կասեցման հիմքերը վերանալու և դատարանի կողմից այդ պահանջը հաստատվելու դեպքում պարտատերը մասնակցում է պարտատերերի ժողովին քվեարկության իրավունքով՝ սույն օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 12. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետում «ե» և «զ» բառերը փոխարինել «ե», «զ» և «ժա.1» բառերով:

Հոդված 13. Օրենքի 22-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Եթե պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, պարտապանը և գործին որպես դիմող մասնակցած պարտատերը ժամանակավոր կառավարչին տվյալ սնանկության գործով կառավարիչ նշանակելու դեմ առարկություն չեն ներկայացնում, ապա դատարանը կարող է որոշում կայացնել տվյալ սնանկության գործով ժամանակավոր կառավարչին կառավարիչ նշանակելու մասին:»:

Հոդված 14. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը «հանդիսանալ» բառից հետո լրացնել «65 տարին չլրացած» բառերով, իսկ «այն ֆիզիկական անձը,» բառերից հետո՝ «բացառությամբ սույն օրենքի 29.2-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի,» բառերով:

[****] *ՀՀՊՏ 1998 N 20 (53),09.09.98:*

Հոդված 15. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 23.1-ին հոդվածով.

«Հոդված 23.1. Կառավարչի վարքագծի կանոնները

1. Կառավարիչը պարտավոր է առաջնորդվել վարքագծի հետևյալ կանոններով.

1) ապահովել հարգալից և անկողմնակալ վերաբերմունք պարտապանի և պարտատերերի նկատմամբ.

2) կողմերին պարզաբանել սնանկության գործընթացի բնույթը.

3) պահպանել սնանկության գործի ընթացքում իրեն հայտնի դարձած օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները.

4) սնանկության գործընթացում իրեն վերապահված լիազորություններն իրականացնել հնարավոր սեղմ ժամկետներում.

5) նպաստել կառավարիչների նկատմամբ վստահության ձևավորմանը:»:

Հոդված 16. Օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում՝

1) հանել «էթիկայի» բառը.

2) «կիրառումը» բառից հետո լրացնել «սույն օրենքի 23.1-ին հոդվածով սահմանված կանոնների հիման վրա» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ նախադասությունով. «Կառավարիչների շարունակական մասնագիտական զարգացումն ապահովելու նպատակով կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունը կազմակերպում և իրականացնում է սնանկության գործով կառավարիչների ամենամյա պարտադիր վերապատրաստումներ՝ նվազագույնը 24 ակադեմիական ժամ ընդհանուր տևողությամբ:»:

Հոդված 17. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժա.1» և «ժա.2» ենթակետերով.

ժա.1) օրենքով սահմանված կարգով դիմում է շարժական գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումները գրանցելու համար.

ժա.2) պարտապանի կամ պարտատերերի կամ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով ներգրավված ֆինանսավորողի պահանջով վերջիններիս տրամադրում է տեղեկություններ պարտապանի սնանկության վարույթի կամ ֆինանսական առողջացման վերաբերյալ պահանջը գրավոր ստանալուց հետո՝ առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում.»:

Հոդված 18. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 29.1-ին և 29.2-րդ հոդվածներով.

«Հոդված 29.1. Կառավարչի գործունեության կասեցումը

1. Կառավարչի գործունեությունը կասեցվում է՝

1) եթե երեք ամիս անընդմեջ չի վճարել կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությանը վճարվող անդամավճարը.

2) եթե կառավարիչը դատական կարգով ճանաչվել է սնանկ՝ սնանկության վարույթի ողջ ժամանակահատվածում.

3) եթե կառավարիչն առանց հարգելի պատճառների չի մասնակցել կառավարիչների վերապատրաստման դասընթացներին մեկ տարվա ընթացքում ավելի քան 8 ակադեմիական ժամ տևողությամբ.

4) օրենքով նախատեսված այլ դեպքերում, կարգով և ժամկետներում:

2. Կառավարչի գործունեության կասեցման մասին որոշումը կայացնում է կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության գործադիր տնօրենը՝ նշելով գործունեության կասեցման հիմնավորումները և ժամկետը:

Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում կառավարչի գործունեությունը կասեցվում է մինչև անդամավճարի վճարումը, իսկ 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված դեպքում՝ մինչև համապատասխան քանակով վերապատրաստման դասընթացների մասնակցության ժամերը լրացնելը: Սույն մասով նախատեսված կասեցման ժամանակահատվածը չի կարող մեկ տարուց ավելի լինել:

3. Կառավարչի գործունեությունը կասեցված է համարվում կասեցման մասին որոշումը (հրամանը) նրան հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

4. Գործունեությունը կասեցված կառավարիչն իրավունք չունի մինչև կասեցման ժամկետի ավարտը կատարելու կառավարչի լիազորությունները:

5. Կառավարիչն իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու իր գործունեության կասեցման մասին որոշումը:

6. Կառավարչի գործունեության կասեցման դեպքում նրա վարույթում գտնվող սնանկության գործերով նշանակվում է նոր կառավարիչ՝ սույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 29.2. Կառավարչի լիազորությունները դադարեցնելը

1. Կառավարչի լիազորությունները դադարեցվում են սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհրդի որոշմամբ, եթե՝

1) կառավարիչը դիմել է այդ մասին.

2) լրացել է նրա 65 տարին (պաշտոնավարման տարիքը), բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասի.

3) իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է սնանկության գործով կառավարչի գործունեության հետ անհամատեղելի այլ աշխատանքի.

4) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան վեց ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

5) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

6) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ մեղադրական դատավճիռը, որով անձը դատապարտվել է ազատությունից զրկելու հետ կապված պատժի, կամ նա դատվածություն ունի պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար.

7) դատական կարգով ճանաչվել է սնանկ, և սնանկության վարույթը չի ավարտվել պարտապանի ֆինանսական առողջացմամբ.

8) նա թույլ է տվել կառավարչի՝ օրենքով սահմանված պարտականությունների կոպիտ կամ պարբերական խախտումներ: Կոպիտ է համարվում այն խախտումը, որն անհամատեղելի է կառավարչի վարքագծի կանոնների հետ: Պարբերական է այն խախտումը, որը, առանձին վերցրած, թեև կոպիտ խախտում չի համարվում, սակայն իր պարբերականությամբ անհամատեղելի է կառավարչի վարքագծի կանոնների հետ:

2. Եթե կառավարիչը սնանկության գործով կառավարչի որակավորում ստացել է օրենքի պահանջների խախտմամբ, ապա կառավարչի լիազորությունները դադարեցվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի որոշմամբ՝ ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհրդի եզրակացության հիման վրա: Որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով որոշումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ կառավարչի լիազորությունները դադարում են նրա 65 տարին լրանալու հաջորդ օրվանից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-5-րդ կետերով նախատեսված դեպքերում՝ որոշման մեջ նշված օրվանից, իսկ 6-7-րդ կետերով նախատեսված դեպքերում՝ համապատասխան դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:

4. Լիազորությունները դադարեցված կառավարիչը պարտավոր է ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում իր մոտ պահպանվող՝ ընթացիկ սնանկության գործերով փաստաթղթերը և նյութերը հանձնել կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից լիազորված անձին:

5. Սնանկության կառավարչի գործունեությամբ զբաղվելու պաշտոնավարման տարիքը լրանալու դեպքում կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհուրդը, հիմք ընդունելով կառավարչի՝ իր պարտականությունների կատարման ունակությունները և կարողությունները, կարող է որոշել թույլատրել կառավարչին մինչև հինգ տարի ժամկետով շարունակել զբաղվել սնանկության կառավարչի գործունեությամբ:»:

Հոդված 19. Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2. Պարտապանի ֆինանսական առողջացման դեպքում կառավարչի վարձատրության չափը սահմանվում է ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ընթացքում պարտատերերի պահանջների բավարարման չափի առնվազն հինգ տոկոսի չափով: Իսկ ֆինանսական առողջացման ծրագիրը հաջողությամբ ավարտելու և պարտապանի առողջացման դեպքում կառավարչին վճարվում է պարգևավճար՝ ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված կարգով:»:

Հոդված 20. Օրենքի 39-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝

1) պարտապանի պարտավորությունների կատարման ժամկետները համարվում են սկսված.

2) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը՝ բացառությամբ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված դեպքերի.

3) դադարում է պարտապանի վճարային, ներառյալ՝ հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների գծով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար ցանկացած տեսակի տույժերի, տոկոսների և տուգանքների հաշվեգրումը.

4) կարճվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում՝ սույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով.

5) կարճվում է պարտապանի վերաբերյալ հայցի ապահովման, բռնագանձման և այլ բնույթի ցանկացած կատարողական վարույթ՝ բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի.

6) վերանում են պարտապանի գույքի վրա դրված արգելանքներն ու սահմանափակումները:».

2) 3-րդ մասի «գ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) ապահովված իրավունք ունեցող պարտատիրոջ ապահովված իրավունքի առարկայի վրա, եթե դատարանը սույն օրենքով սահմանված կարգով պարտատիրոջը թույլատրել է դրա իրացումը արտադատական կարգով.»:

Հոդված 21. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 39.1-ին և 39.2-րդ հոդվածներով.

«Հոդված 39.1. Ապահովված իրավունքի առարկայի իրացման մասին դիմումը

1. Այն պարտատերը, որ պարտապանի նկատմամբ ունի ապահովված իրավունքներ, և նրանց միջև օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրով առկա են այդ իրավունքների արտադատական իրականացման պայմաններ, կարող է մինչև պարտատերերի պահանջների ցուցակը դատարանի կողմից հաստատվելը դիմում ներկայացնել դատարան՝ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքների առարկայի արտադատական կամ սույն օրենքով նախատեսված կարգով իրացում թույլատրելու խնդրանքով:

2. Ապահովված պարտատիրոջ դիմումը և կից փաստաթղթերը ներկայացվում են սույն օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

Հոդված 39.2. Ապահովված իրավունքի առարկայի իրացման և ապահովված պահանջի չափը հաստատելու մասին դիմումի քննության կարգը

1. Դատարանը, ստանալով ապահովված պարտատիրոջ դիմումը, դիմումի օրինակը երկու աշխատանքային օրվա ընթացքում հանձնում է պարտապանին և կառավարչին: Պարտապանը և կառավարիչը պարտավոր են դիմումի օրինակը ստանալուց հետո՝

հինգ աշխատանքային օրվա ընթացքում, դիմումի կապակցությամբ գրավոր դիրքորոշում հայտնել:

2. Եթե պարտապանը կամ կառավարիչը սահմանված ժամկետում դիրքորոշում չեն ներկայացնում կամ ներկայացված դիրքորոշմամբ չեն առարկում դիմումին, ապա դատարանը դիմումը ստանալուց հետո՝ 11-րդ օրը, կայացնում է որոշում ապահովված պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքների առարկայի իրացում թույլատրելու մասին:

3. Եթե պարտապանը կամ կառավարիչը դատարան ներկայացված դիրքորոշմամբ առարկում է դիմումին, ապա դատարանը առարկությունը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դատական նիստ է հրավիրում, որի մասին պատշաճ կարգով ծանուցվում են դիմողը, պարտապանը և կառավարիչը: Առարկությունների քննարկման արդյունքում դատարանը որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը և ապահովվածությունը:

4. Եթե պարտապանի կամ կառավարչի առարկությունը պայմանավորված է ապահովված իրավունքի առարկայի՝ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրում օգտագործելու անհրաժեշտությամբ, ապա առարկությանը կից պետք է ներկայացվեն ֆինանսական առողջացման ծրագիրը և ապահովված պարտատիրոջը համարժեք պաշտպանություն տրամադրելու մասին հայտարարությունը:

5. Ապահովված պարտատիրոջ՝ ապահովված իրավունքի առարկայի արտադատական իրացման մասին դիմումը կարող է դատարանը մերժել, եթե՝

1) պարզվում է, որ ապահովված պարտատերը չունի արտադատական կարգով գույքն իրացնելու իրավունք.

2) առանց ապահովված իրավունքի առարկայի օգտագործման պարտապանի ֆինանսական առողջացման ծրագիրը չի կարող իրականացվել, պայմանով, որ ապահովված պարտատիրոջը տրամադրվել է համարժեք պաշտպանություն, որի վերաբերյալ կնքվել է պայմանագիր:

6. Ապահովված պարտատերն իրավունք ունի կրկին դիմելու ապահովված իրավունքի առարկան իրացնելու մասին դիմումով, եթե գույքն արտադատական կարգով իրացնելու մերժման հիմքերը վերացել են: Ապահովված պարտատիրոջ կրկին ներկայացված դիմումի քննարկումը և լուծումը կատարվում են սույն հոդվածով սահմանված կարգով:

7. Արտադատական կարգով գույքն իրացնելու իրավունք չունեցող ապահովված պարտատիրոջ կողմից դատական կարգով ապահովված իրավունքի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու մասին դիմումը ներկայացվում և քննվում է սույն օրենքի 39.1-ին և 39.2-րդ հոդվածներով սահմանված կարգով, եթե այդ հոդվածների իրավակարգավորումները կիրառելի են տվյալ դիմումի քննության համար՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի[*****] համապատասխան իրավակարգավորումների պահանջները: Սույն մասի հիմքով դատարանի վճռով ապահովված իրավունքի առարկայի վրա բռնագանձում տարածելու դեպքում ապահովված իրավունքի առարկայի իրացումը կատարվում է սնանկության գործի շրջանակներում՝ սույն օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 22. Օրենքի 41-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի առաջին պարբերությունը «պաշտպանությունը» բառից հետո լրացնել «ֆինանսական առողջացման ծրագրի գործողության կամ» բառերով և նույն մասի «օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասով» բառերը փոխարինել «օրենքով» բառով.

2) 1-ին մասի երկրորդ պարբերության և 2-րդ մասի «բ» ենթակետի «գրավի» բառը փոխարինել «ապահովված իրավունքի» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Ֆինանսական առողջացման ծրագրում ապահովված իրավունքի առարկան օգտագործելու համար համարժեք պաշտպանությունը տրամադրվում է մինչև ֆինանսական առողջացման ծրագրին հավանություն տալու հարցի քննարկումը:»:

[*****] *ՀՀՊՏ 1998 N 17 (50), 10.08.98:*

Հոդված 23. Օրենքի 43-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 43. Ապահովված պահանջները և դրանց բավարարումը

1. Ապահովված են համարվում ապահովված իրավունքով ծանրաբեռնված պահանջները: Ապահովված պարտատերեր են համարվում ապահովված իրավունք ունեցող անձինք՝ այդ պահանջների մասով:

2. Ապահովված իրավունքի առարկան իրացնելու մասին դիմումը բավարարելու վերաբերյալ դատարանի որոշմամբ ապահովված պարտատերը չի ընդգրկվում սնանկության գործով պարտատերերի ցանկում, և նրա ապահովված պահանջները բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար ապահովված իրավունքի առարկայի իրացման հաշվին: Այդ դեպքում ապահովված պարտատերը, անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ:

3. Երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտատիրոջ պահանջները, այդ թվում՝ ապահովված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պայմանագրով սահմանված տուժանքները, տուգանքները և վճարման ենթակա տոկոսները կարող են բավարարվել երաշխիք կամ երաշխավորություն տված անձի միջոցների հաշվին: Երաշխիք կամ երաշխավորություն տված անձի միջոցները բավարար չլինելու կամ երաշխիք կամ երաշխավորություն տված անձին պահանջ չներկայացնելու դեպքում ապահովված պարտատերը սույն օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով ընդգրկվում է սնանկության գործով պարտատերերի ցանկում և իր պահանջների բավարարումը ստանում է սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով: Ընդ որում, երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պարտապանի սնանկության գործընթացում հաշվարկված՝ պայմանագրով սահմանված տուժանքների, տուգանքների և վճարման ենթակա տոկոսների գումարները չեն կարող պահանջվել պարտապանից:

4. Եթե ապահովված պարտատերն ընդգրկվում է սնանկության գործով պարտատերերի ցանկում, ապա նա իր ապահովված պահանջների բավարարումը ստանում է սույն հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ մասերով սահմանված կարգով:

5. Պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատերը կարող է պահանջել՝ ապահովված պարտավորությունն առաջնահերթ կերպով բավարարել ապահովված իրավունքի առարկայի վաճառքից ստացված միջոցների հաշվին:

6. Պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատերը չի կարող մասնակցել պարտապանին պատկանող իր համապատասխան պարտավորության համար չապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցների բաշխմանը մինչև ապահովված իրավունքի առարկայի իրացումը, քանի դեռ ապահովված իրավունքի առարկայի արժեքն ավելի կամ հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջին՝ բացառությամբ դատարանի որոշմամբ համարժեք պաշտպանություն տրամադրելու դեպքերի: Եթե ապահովված իրավունքի առարկայի արժեքը (մեկնարկային գինը) հրապարակային սակարկություններով իրացման ընթացքում կամ գույքի կորստի (ոչնչացման, հափշտակության) կամ վնասելու արդյունքում նվազում է ապահովված պահանջի չափից, ապա ապահովված պարտատերը ձեռք է բերում քվեարկության ձայնի իրավունք՝ ապահովված իրավունքի առարկայի արժեքի նվազած չափով:

7. Եթե ապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցները բավարար չեն պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատիրոջ պահանջներն ամբողջովին մարելու համար, ինչպես նաև երաշխիքով (երաշխավորությամբ) ապահովված պահանջների չբավարարված (այդ թվում՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձից պարտավորության կատարում չպահանջելու հետևանքով չբավարարված) մասը (բացառությամբ այդ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պարտապանի սնանկության գործընթացում հաշվարկված՝ պայմանագրով սահմանված տուժանքների, տուգանքների և վճարման ենթակա տոկոսների գումարների) համարվում է չապահովված պահանջ, իսկ պարտատերը՝ չապահովված պարտատեր՝ չապահովված պահանջի չափով:

8. Եթե ապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցները գերազանցում են համապատասխան ապահովված պահանջի գումարը, ապա գերազանցող գումարի մասով այդ միջոցների նկատմամբ տարածվում է մորատորիում, և այդ միջոցները բաշխվում են սույն օրենքով սահմանված հերթականությամբ, իսկ եթե ապահովված իրավունքի առարկան այլ անձի սեփականություն է՝ փոխանցվում են այդ անձին:

9. Եթե ապահովված իրավունքի առարկայի մեկնարկային գինը հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջի գումարին կամ ցածր է դրանից, ապա պարտատերերի ցանկում ընդգրկված պարտատերն իրավունք ունի իր պահանջի կամ դրա մասի չափով դատարանի որոշմամբ որպես սեփականություն իր կամ իր նշած անձի օգտին ստանալու գրավի առարկան՝ փոխհատուցելով այդ գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը՝ գրավի առարկայի արժեքի հինգ տոկոսի չափով: Այդ դեպքում տվյալ պարտատիրոջ պահանջի չափը չի նվազեցվում գույքի պահպանման և փոխանցման ծախսերի և կառավարչի վարձատրության համար վճարված գումարի չափով:

10. Եթե պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատիրոջ պահանջն ապահովված է երրորդ անձի գույքով, ապա այդ անձն իրավունք ունի դադարեցնելու իր գույքով պահանջի ապահովումը՝ սնանկության հատուկ հաշվին որպես դեպոզիտ փոխանցելով՝

1) գույքի առաջիկա իրացման համար գնահատված կամ մեկնարկային գինը հիմնական ապահովված պարտավորության արժեքի չափը գերազանցելու դեպքում՝ ապահովված պահանջի, գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը.

2) գույքի առաջիկա իրացման համար գնահատված կամ մեկնարկային գինը հիմնական ապահովված պարտավորության արժեքի չափից պակաս լինելու դեպքում՝ վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի չափով:

11. Երրորդ անձ գրավատուի, երաշխավորի կամ երաշխիք տվող անձի՝ պարտապանի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջ ձեռք բերելու դեպքում այդ պահանջը ենթակա է բավարարման՝ որպես սույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» ենթակետով նախատեսված պահանջ:»:

Հոդված 24. Օրենքի 46-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Եթե իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը գրավոր առարկություն են ներկայացնում պահանջների նախնական ցուցակի առաջնահերթության կամ որևէ պարտատիրոջ պահանջի վերաբերյալ, ապա դատավորը առարկությունը ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, հրավիրում է դատական նիստ, որի տեղի և ժամանակի մասին կառավարչին, պարտապանին և պարտատերերին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլով՝ նիստից առնվազն երեք օր առաջ տրվող հայտարարությամբ կամ ծանուցագիր ուղարկելու միջոցով:»:

Հոդված 25. Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասում «գրավով ապահովված» բառերը փոխարինել «ապահովված իրավունքով» բառերով, իսկ «գրավադրված գույքը» բառերը՝ «ապահովված իրավունքի առարկան» բառերով:

Հոդված 26. Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Սույն հոդվածով սահմանված սահմանափակումները չեն տարածվում դատարանի կողմից բավարարված արտադատական կարգով իրացման համար նախատեսված գործարքների կամ այդ գործարքի կատարման վրա:»:

Հոդված 27. Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Կառավարիչը կարող է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դիմել և դատական կարգով հետ ստանալ՝»:

Հոդված 28. Օրենքի 59-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը չի կարող գերազանցել 36 ամիսը, եթե սույն օրենքով սահմանված կարգով դրա գործողության ժամկետը չի երկարաձգվել:».

2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժբ.1» ենթակետով.

«ժբ.1) պարտապան կազմակերպության մասնակցի (մասնակիցների) սեփականությունը հանդիսացող պարտապան կազմակերպությունում ունեցած բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայաբաժինների և օրենքներով սահմանված այլ արժեթղթերի) օտարումը, վարձակալության տալը, գրավադրումը կամ այլ ձևով ծանրաբեռնումը.»:

Հոդված 29. Օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Ֆինանսական առողջացման ծրագրի հետ մեկտեղ պարտատերերին, ինչպես նաև առողջացման ծրագրով նախատեսված ծրագրի հնարավոր ֆինանսավորողներին ըստ պահանջի ներկայացվում են բոլոր այն տեղեկությունները, այդ թվում՝ ֆինանսական, որոնք հիմք են ծառայել պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի համար:»:

Հոդված 30. Օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Եթե ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսվում է այլ անձանց կողմից պարտապանին ֆինանսավորման տրամադրում, ապա տվյալ ծրագրի հաստատման համար ֆինանսավորողի համաձայնությունը պարտադիր է: Պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում ֆինանսավորում տրամադրած կամ պարտապանի պարտատոմսեր կամ մուրհակներ ձեռք բերած անձանց պահանջներն ունեն բավարարման առաջնահերթություն պարտապանի հանդեպ մյուս բոլոր պահանջների նկատմամբ և բավարարվում են ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ընթացքում պարտապանի գործունեությունից ստացած զուտ շահույթից (զուտ եկամտից), եթե այլ բան նախատեսված չէ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով կամ ֆինանսավորողի և պարտատերերի գրավոր համաձայնությամբ:»:

Հոդված 31. Օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ֆինանսական առողջացման ծրագիրը պարտատերերի ժողովի կողմից ընդունվելուց հետո դատարանի հաստատմանը ներկայացնելիս պարտապանը պարտավոր է դատարան ներկայացնել պահանջներ չներկայացրած պարտատերերի ցուցակը: Պահանջներ չներկայացրած պարտատերերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ծանուցվում են պարտապանի սնանկության և պարտատերերի պահանջները մեկամսյա ժամկետում դատարան ներկայացնելու անհրաժեշտության մասին: Ծանուցագրում նշվում է պահանջ չներկայացնելու իրավական հետևանքների մասին:

Սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված պահանջները դատարանը քննարկում է սույն օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

Եթե ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումից հետո դատարան են ներկայացվում պարտատերերի նոր պահանջներ, ապա ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու իրավունք ունեցող անձը մեկամսյա ժամկետում կարող է դատարան ներկայացնել նոր ֆինանսական առողջացման ծրագիր կամ հաստատված ծրագրի փոփոխություններ: Նոր ֆինանսական առողջացման ծրագիրը կամ հաստատված ծրագրի փոփոխությունները դատարան են ներկայացվում և հաստատվում սույն օրենքով սահմանված կարգով:

Եթե ծանուցված պարտատերը պահանջ չի ներկայացնում, ապա պարտապանի ֆինանսական առողջացման հիմքով սնանկության գործն ավարտելուց հետո պարտապանն ազատվում է պարտավորությունից: Չծանուցված պարտատերերը պահպանում են պարտապանի դեմ պահանջ ներկայացնելու իրավունքը:»:

Հոդված 32. Օրենքի 66-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Պարտատերերի ժողովը պարտավոր է քննարկել և որոշել ֆինանսական առողջացման ծրագիրը երկարաձգելու կամ դրանում փոփոխություններ կատարելու հարցը սույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց կողմից դիմելու դեպքում:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Ֆինանսական առողջացման ծրագրի ընդհանուր տևողությունը դատարանի կողմից դրա սկզբնական հաստատումից հետո չի կարող գերազանցել 72 ամիսը, իսկ սկզբնական հաստատվող ֆինանսական առողջացման ծրագրի տևողությունը չի կարող գերազանցել 36 ամիսը:»:

Հոդված 33. Օրենքի 75-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «կառավարիչը՝» բառից հետո լրացնել «իր կողմից գույքագրման արդյունքներով ներկայացված և պարտատերերի խորհրդի, իսկ խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում պարտատերերի ժողովի կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագրի համաձայն և» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Գույքի վաճառքի ծրագիրը պետք է ներառի պարտապանի ամբողջ գույքի, ներառյալ՝ պահանջի իրավունքների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ (անվանումները, նկարագրությունը, քանակը, հաշվեկշռային արժեքը), վաճառքի նախատեսվող ձևը, նախնական գնահատված արժեքները՝ ըստ գույքի տեսակի: Գույքի վաճառքի ծրագիրը պարտատերերի խորհրդի կամ ժողովի կողմից չհաստատվելու դեպքում կառավարիչն իրավունք ունի դիմելու դատարան և պահանջելու հաստատել գույքի վաճառքի ծրագիրը՝ կցելով պարտատերերի ժողովի կամ խորհրդի որոշումները կամ ժողովի կամ խորհրդի նիստի անցկացման անհնարինության հիմքերը: Ծրագրի փոփոխությունները կատարվում են ծրագրի ընդունման համար սահմանված կարգով:»:

Հոդված 34. Օրենքի 82-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ա» ենթակետը «տնօրինման համար անհրաժեշտ ծախսերը» բառերից հետո լրացնել «(սնանկության դիմումը ներկայացնելու օրվանից մինչև ֆինանսական առողջացման ծրագրի նախագծի հաստատումն ընկած ժամանակահատվածում ֆինանսավորումները)» բառերով.

2) 1-ին մասի «ե» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե) պարտապանին սնանկ ճանաչելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պարտապանի գույքի օտարման հետ կապված ընթացիկ անուղղակի հարկային պարտավորությունները.»:

Հոդված 35. Օրենքի 88-րդ հոդվածը «անհատ ձեռնարկատիրոջ» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի սնանկության հետևանքով» բառերով:

Հոդված 36. Օրենքի 94-րդ հոդվածում՝

1) ուժը կորցրած ճանաչել 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը.

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատում է դատարանը, եթե այն համապատասխանում է սույն օրենքով սահմանված պահանջներին, և առկա է պարտապանի և գրանցված պարտատիրոջ համաձայնությունը: Ֆիզիկական անձի առողջացման ծրագիրը ներկայացնելու, հաստատելու հետ կապված հարաբերությունների նկատմամբ տարածվում են իրավաբանական անձանց համար սույն օրենքով սահմանված իրավակարգավորումները, եթե այլ բան սահմանված չէ սույն հոդվածով:

Ֆիզիկական անձի առողջացման ծրագրի առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել չորս տարին:»:

Հոդված 37. Օրենքի 97-րդ հոդվածի «ա» ենթակետում «երրորդ» բառը փոխարինել «երկրորդ» բառով:

Հոդված 38. Օրենքի 99-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 39. Օրենքի 100-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Անհատ ձեռնարկատիրոջ սնանկության վարույթում ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված պարտավորություններով նրա պարտատերերը, ինչպես նաև անձնական բնույթի այլ պահանջներով պարտատերերն իրավունք ունեն ներկայացնելու իրենց պահանջները սույն օրենքով սահմանված կարգով: Եթե սնանկ ճանաչված ֆիզիկական անձը նաև անհատ ձեռնարկատեր է, ապա նրա՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ գործունեության հետ կապված պարտավորություններով պարտատերերն իրավունք ունեն ներկայացնելու իրենց պահանջները սույն օրենքով սահմանված կարգով:».

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 40. Օրենքի 105-րդ հոդվածի 1-ին մասում «և խորհրդի համաձայնության առկայության դեպքում» բառերը փոխարինել «և պարտատերերի առարկությունների բացակայության դեպքում» բառերով:

Հոդված 41. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
2 հուլիսի 2016 թ., Երևան, ՀՕ-105-Ն

«Բաժնետիրական ընկերությունների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 93-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. «Հաշվապահական հաշվառման մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով խոշոր ընկերությունում ընկերության աուդիտն իրականացնող անձը կամ վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) շահագրգռվածության առկայությամբ խոշոր գործարքի կնքման որոշումն ընդունելուց հետո՝ մինչև պայմանագրի կնքումը, տալիս է եզրակացություն գործարքի՝ սույն օրենքի պահանջներին, ինչպես նաև շուկայական արժեքին համապատասխանության վերաբերյալ:»:

Հոդված 2. Օրենքի 96-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Ընկերությունը պարտավոր է շահագրգռվածության առկայությամբ խոշոր գործարք կնքելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ մինչև պայմանագրի կնքումը, գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև սույն օրենքի 93-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված եզրակացությունը հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
2 հուլիսի 2016 թ., Երևան, ՀՕ-108-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2001 N 34 (166), 06.11.01:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2016 թվականի հունիսի 17-ին (ՀՀՊՏ N 54 (1234), 13.07.16):
[***] *ՀՀՊՏ 2003 N 9 (244), 12.02.03:*

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում[*] լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 234-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Ազդագրի հիման վրա գրավով ապահովված արժեթղթերի թողարկման դեպքում ազդագիրը հանդիսանում է նաև գրավի պայմանագիր կնքելու օֆերտա (գրավի պայմանագիր կնքելու առաջարկ):».

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Ազդագրի հիման վրա գրավով ապահովված արժեթղթերի թողարկման դեպքում գրավի պայմանագրում գրավառուի անվան (անվանման) և բնակության (գտնվելու) վայրի փոխարեն նշվում է, որ գրավառու է հանդիսանում արժեթղթերի նկատմամբ իրավունքների գրառում կատարող անձի կողմից վարվող գրանցամատյանում (ռեեստրում) նշված արժեթղթի սեփականատերը (անվանատերը):».

Հոդված 2. Օրենքի 236-րդ հոդվածում ՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Գրավ դրված գույքը այլ գրավի (հաջորդող գրավի) առարկա դարձնելու գրավատուի իրավունքը սահմանափակող համաձայնությունն առ ոչինչ է:».

2) 2-րդ մասից հանել առաջին նախադասությունը.

3) 3-րդ մասը «օրենքով» բառից հետ լրացնել «կամ նոր և նախորդ բոլոր գրավառուների միջև կնքված պայմանագրով» բառերով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Եթե նոր և նախորդ բոլոր գրավառուների միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա պարտապանի կողմից նոր գրավառուի հանդեպ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նոր գրավառուն մինչև գրավի առարկայի բռնագանձման գործընթաց սկսելը պարտավոր է նախորդ գրավառուին ծանուցել պարտապանի կողմից իր հանդեպ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքի մասին՝ այդ մասին տեղեկանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում: Ծանուցումը ստանալու պահից նախորդ գրավառուն իրավունք ունի՝

1) չձեռնարկելու որևէ գործողություն գրավի առարկայի հետ կապված, կամ

2) սկսելու գրավի առարկայի բռնագանձման գործընթացը, որի դեպքում նոր գրավառուն այլևս իրավասու չէ սկսելու բռնագանձման գործընթաց, կամ

3) գնելու գրավի առարկա գույքը, կամ

4) նոր գրավառուից գնելու գրավով ապահովված պարտավորությունը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 25 գլխով սահմանված կարգով, և դադարեցնելու բռնագանձման գործընթացը, կամ

5) առաջարկելու նոր գրավառուին ամբողջությամբ կատարել իր (նախորդ գրավառուի) նկատմամբ ունեցած պարտապանի պարտավորությունը, կամ

6) համաձայնություն տալու նոր գրավառուի կողմից բռնագանձման արդյունքում գրավի առարկան երրորդ անձի օտարելուն, որի դեպքում նախորդ գրավառուի գրավի իրավունքը գույքի նկատմամբ պահպանվում է:

Նախորդ գրավառուն պարտավոր է սույն հոդվածով նախատեսված իր իրավունքների իրականացման մասին որոշում կայացնելու մասին տեղեկացնել նոր գրավառուին սույն հոդվածով նախատեսված ծանուցումը ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

---

[*] *ՀՀՊՏ 1998 N 17 (50), 10.08.98:*

[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2016 թվականի հունիսի 17-ին (ՀՀՊՏ N 54 (1234), 13.07.16):

Նոր գրավառուն պարտավոր է պարտապանի կողմից իր հանդեպ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում առաջնորդվել սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված իրավունքների իրականացման վերաբերյալ նախորդ գրավառուի կայացրած որոշմամբ:

Եթե նոր և նախորդ բոլոր գրավառուների միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ, մի քանի նախորդ գրավառուների առկայության դեպքում նոր գրավառուն պարտավոր է պարտապանի կողմից իր հանդեպ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում գրավի առարկայի բռնագանձման գործընթաց սկսելուց առաջ սույն հոդվածով սահմանված կարգով ծանուցել իրեն նախորդող բոլոր նախորդ գրավառուներին և առաջնորդվել սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված իրավունքների իրականացման վերաբերյալ նախորդ գրավառուների կայացրած որոշմամբ՝ ըստ նախորդ գրավառուների հաջորդականության:»:

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 243.1-ին հոդվածով.

«Հոդված 243.1. Գրավ դրված գույքի վրա գրավատուի՝ երրորդ անձանց նկատմամբ ունեցած այլ պարտավորությունների կատարման համար կիրառվող սահմանափակումները

1. Գրավ դրված գույքի վրա գրավատուի՝ երրորդ անձանց նկատմամբ ունեցած այլ պարտավորությունների կատարման համար արգելադրում, սառեցում, կալանք, բռնագանձում, առգրավում կամ գույքի նկատմամբ ցանկացած այլ սահմանափակում (սույն հոդվածում այսուհետ՝ Սահմանափակում) չի կարող խոչընդոտ (արգելք) հանդիսանալ գրավի առարկայից առաջնային բավարարում ստանալու նախապատվության իրավունք ունեցող գրավառուի համար իրականացնելու սույն օրենսգրքով գրավառուին վերապահված բոլոր իրավունքները, այդ թվում՝ բռնագանձում տարածելու և իրացնելու գրավի առարկան՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով[***] նախատեսված դեպքերի, որոնց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ օրենսգրքով:

2. Այն դեպքում, երբ գրավառուն, օգտվելով սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքից, բռնագանձում է տարածում գրավի առարկայի վրա և իրացնում գրավի առարկան, ապա գրավի առարկայի նկատմամբ կիրառված բոլոր Սահմանափակումները գրավի առարկայի իրացման ժամանակ դադարում են օրենքի ուժով, և նոր սեփականատիրոջը գույքն անցնում է առանց Սահմանափակումների: Սահմանափակումներն օրենքի ուժով վերսկսում (վերականգնվում) են գրավառուի պահանջները բավարարելուց հետո սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված մնացած դրամական միջոցների վրա:

Գրավառուն գրավի առարկայի իրացման ժամանակ դիմում է Սահմանափակումը գրանցող (հաշվառող) մարմնին օրենքի ուժով դադարած Սահմանափակումները գրանցումից (հաշվառումից) հանելու համար: Գրավառուի դիմումը հիմք է Սահմանափակումը գրանցող (հաշվառող) մարմնի համար Սահմանափակումը գրանցումից (հաշվառումից) հանելու համար:

3. Սույն հոդվածի համաձայն՝ գրավի առարկայի իրացման և գրավով ապահովված պարտավորությունների բավարարման արդյունքում մնացած գումարը սույն օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ծախսերը նվազեցնելուց հետո փոխանցվում է գրավատուի բանկային հաշվին: Այն դեպքում, երբ գրավատուն չունի բանկային հաշիվ, կամ գրավառուին հայտնի չեն գրավատուի բանկային հաշվի տվյալները, ապա գրավառուն օրենքի ուժով պարտավոր է գրավատուի համար անվճար բացել և վարել բանկային հաշիվ և այդ միջոցները փոխանցել բացված բանկային հաշվին: Այդ մասին գրավառուն ծանուցում է իրեն հայտնի մյուս պարտատերերին և Սահմանափակում կիրառած մարմնին: Ընդ որում, տվյալ բանկային հաշվին այլ միջոցներ, քան նախատեսված են սույն մասով, մուտքագրել չի թույլատրվում, և այդ հաշիվը ենթակա է փակման սույն մասով նախատեսված գումարը ելքագրվելուց հետո:

*** *ՀՀՊՏ 1998 N 22 (55), 21.09.98:*

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված միջոցները բանկային կամ դեպոզիտ հաշվին փոխանցելու պահից այդ միջոցների վրա օրենքի ուժով վերսկսում (վերականգնվում) է մինչև գրավի առարկայի իրացումը կիրառված Սահմանափակումը:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտավորությունները կատարելու անհնարինության դեպքում կիրառվում են սույն օրենսգրքի 366 հոդվածի դրույթները՝ սույն հոդվածի պահանջներին համապատասխան:

6. Եթե գույքը հանդիսանում է հաջորդող գրավի առարկա, ապա նոր գրավառուն իրավասու է, սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան, բռնագանձելու և իրացնելու գրավի առարկան՝ բացառապես սույն օրենսգրքի 236-րդ հոդվածով սահմանված կարգով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 246-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) դա նախատեսված է օրենքով.»:

Հոդված 5. Օրենսգրքի 249-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Այն դեպքում, երբ գույքը հանդիսանում է հաջորդող գրավի առարկա, ի լրումն սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պայմանների, նոր գրավառուն իրավասու է բռնագանձելու և իրացնելու գրավի առարկան բացառապես սույն օրենսգրքի 236-րդ հոդվածով սահմանված կարգով:».

2) 2-րդ մասում՝

ա. առաջին պարբերության «գրավատուին» բառը բոլոր տեղերում փոխարինել «գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են)» բառերով, իսկ «գրավատուն» բառը՝ «գրավատուն (պարտապանը)» բառերով,

բ. առաջին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Այն դեպքում, երբ գրավի իրավունքը ենթակա է գրանցման (այդ թվում՝ պետական գրանցման), գրավառուն մինչև գրավի բռնագանձման գործընթացն սկսելը, ինչպես նաև գրավի բռնագանձման գործընթացը դադարեցնելու կամ ավարտվելու դեպքում պարտավոր է այդ մասին պատշաճ ձևով ծանուցել նաև գրանցում իրականացնող մարմնին:»,

գ. երկրորդ և երրորդ պարբերությունների «պարտապանին» բառը փոխարինել «գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են), իսկ կիրառության դեպքում՝ նաև գրանցում իրականացնող մարմնին» բառերով,

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածով սահմանված պատշաճ ծանուցում կամ բռնագանձման մասին ծանուցումը գրավատուին կամ պարտապանին պատշաճ կարգով հանձնված է համարվում, եթե ծանուցումը կատարվել է սույն օրենսգրքի 20.1-ին գլխով սահմանված կարգով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 251-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Գրավառուի կողմից սույն գլխով սահմանված կարգով գրավի առարկան ի սեփականություն վերցնելու օրվանից գրավով ապահովված պարտավորության մարված չափի նկատմամբ որևէ տոկոս կամ տուժանք չի կիրառվում:»:

Հոդված 7. Օրենսգրքի 256-րդ հոդվածի 4-րդ մասում «Արժեթղթով» բառը փոխարինել «Փաստաթղթային արժեթղթով» բառերով:

Հոդված 8. Օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Ազդագրի հիման վրա հիփոթեքով ապահովված արժեթղթերի թողարկման դեպքում հիփոթեքի պայմանագրում գրավառուի անվան (անվանման) և բնակության (գտնվելու) վայրի փոխարեն նշվում է, որ գրավառու է հանդիսանում արժեթղթերի նկատմամբ իրավունքների գրառում կատարող անձի կողմից վարվող գրանցամատյանում (ռեեստրում) նշված արժեթղթի սեփականատերը (անվանատերը):»:

Հոդված 9. Օրենսգրքի 263-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Ազդագրի հիման վրա հիփոթեքով ապահովված արժեթղթերի թողարկման դեպքում հիփոթեքի պայմանագիրը կարող է կնքվել փաստաթղթի փոխանակմամբ:».

2) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Ազդագրի հիման վրա հիփոթեքով ապահովված արժեթղթերի թողարկման դեպքում հիփոթեքի պայմանագիրը հանդիսանում է ազդագրի բաղկացուցիչ մաս, այդ թվում՝ առանձին հավելված (հիփոթեքի պայմանագիր), որը պետք է վավերացվի նոտարական կարգով:»:

Հոդված 10. Օրենսգրքի 264-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Ազդագրի հիման վրա հիփոթեքով ապահովված արժեթղթերի թողարկման դեպքում հիփոթեքի պայմանագրով գրավի իրավունքների (առաջին) պետական գրանցումը պետք է իրականացվի ազդագրի բաղկացուցիչ մաս, այդ թվում՝ առանձին հավելված հանդիսացող հիփոթեքի պայմանագրի հիման վրա: Ազդագրի հիման վրա հիփոթեքով ապահովված արժեթղթերի թողարկման պահից հիփոթեքի պայմանագրով գրավի իրավունքների (հետագա) պետական գրանցումը պետք է իրականացվի արժեթղթերի նկատմամբ իրավունքների գրառում կատարող անձի կողմից վարվող գրանցամատյանից (ռեեստրից) տրված քաղվածքի հիման վրա: Ընդ որում, ազդագրի հիման վրա թողարկված հիփոթեքով ապահովված արժեթղթերի սեփականատերերի փոփոխության յուրաքանչյուր դեպքում նոր գրավառուի իրավունքները համարվում են պետական գրանցում ստացած՝ արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքն արժեթղթերի նկատմամբ իրավունքների գրառում կատարող անձի կողմից վարվող գրանցամատյանում (ռեեստրում) գրանցելու պահից:»:

Հոդված 11. Օրենսգրքի 5-րդ բաժնի վերնագիրը «ԺԱՄԿԵՏՆԵՐ:» բառից հետո լրացնել «ՃԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ:» բառով:

Հոդված 12. Օրենսգրքի 299-րդ հոդվածի 4-րդ մասը «ինչպես նաև» բառերից հետո լրացնել «անշարժ գույքով ապահովված վարկերի խմբային փոխանցման պայմանագրերի վրա,» բառերով:

Հոդված 13. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.1-ին գլխով.

«ԳԼՈՒԽ 20.1

ՃԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Հոդված 330.1. Ճանուցումները

1. Օրենքով ծանուցման համար նախատեսված պարտադիր ընթացակարգեր ու պայմաններ նախատեսված չլինելու դեպքում կողմերը կարող են պայմանագրով սահմանել օրենքով կամ պայմանագրով իրենց վերապահված իրավունքների ու պարտականությունների իրացման մասին միմյանց ծանուցման կարգ, որի պահպանումը պարտադիր է կողմերի, իսկ օրենքով կամ կամովին ստանձնած պարտավորության դեպքում՝ նաև այլոց համար:

2. Օրենքով ծանուցման համար նախատեսված պարտադիր ընթացակարգեր ու պայմաններ նախատեսված չլինելու դեպքում իրավաբանական անձինք և արժեթղթեր թողարկողները կարող են համապատասխանաբար կանոնադրությամբ կամ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արժեթղթերի թողարկման ազդագրով նախատեսել ծանուցման պարտադիր կարգ: Իրավաբանական անձի կանոնադրությամբ սահմանված ծանուցման կարգը պարտադիր է իրավաբանական անձի հիմնադիրների, մասնակիցների ու կառավարման մարմինների անդամների համար, իսկ արժեթղթերի թողարկման ազդագրով սահմանված ծանուցման կարգը՝ արժեթղթերի սեփականատերերի համար:

3. Պայմանագրով, կանոնադրությամբ կամ «Արժեթղթերի շուկայի մասին»[****] Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արժեթղթերի թողարկման ազդագրով սահմանված կարգով կատարված ծանուցումը համարվում է պատշաճ:

[****] *ՀՀՊՏ 2007 N 53 (557), 31.10.07:*

4. Օրենքով կամ պայմանագրով կամ կանոնադրությամբ կամ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արժեթղթերի թողարկման ազդագրով ծանուցման համար նախատեսված պարտադիր ընթացակարգեր ու պայմաններ նախատեսված չլինելու դեպքում ծանուցումը համարվում է պատշաճ, եթե կատարվել է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, առձեռն փոխանցմամբ, իսկ դրանց անհնարինության դեպքում՝ օրենքով սահմանված հրապարակային եղանակով:

5. Իրավունքը գրանցման ենթակա լինելու դեպքում ծանուցման միջոցով իրավունքի իրացումը համարվում է պատշաճ, եթե ծանուցումն ուղարկվել է կամ օրենքով նախատեսված կարգով գրանցվել է գրանցում իրականացնող մարմնում:

6. Ծանուցողը ծանուցվողին կարող է ներկայացնել միայն այնպիսի առարկություններ, որոնք ապացուցում են իր կողմից ծանուցումը պայմանագրով սահմանված կարգով կատարվելու մասին: Ծանուցվողը ծանուցողին կարող է ներկայացնել միայն այնպիսի առարկություններ, որոնք ապացուցում են ծանուցողի կողմից ծանուցումը պայմանագրով սահմանված կարգով չկատարվելու մասին:

7. Դատարանը, արբիտրաժային տրիբունալը, ֆինանսական համակարգի հաշտարարը, ինչպես նաև պետական մարմինները կարող են կողմի պահանջով կողմերի միջև կնքված պայմանագրից բխող վեճերի լուծման կամ իրավունքների ու պարտականությունների իրականացման ժամանակ կիրառել կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված ծանուցման կարգը, եթե կողմերը պայմանագրով ուղղակիորեն նախատեսել են նման հնարավորություն: Այս դրույթը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ նման հնարավորություն նախատեսված է իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ արժեթղթեր թողարկողի ազդագրով:

8. Սպառողների շահերի պաշտպանության նպատակով օրենքով կամ այլ իրավական ակտերով կարող են սահմանվել ծանուցման օրինակելի կարգ ու պայմաններ:»:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
7 հուլիսի 2016 թ., Երևան, ՀՕ-110-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Թույլատրվել է*** «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Մալաթիա 2», «Նոր Նորք 2», «Արտաշատ 2» մասնաճյուղերի, ինչպես նաև «Չարենցավան» ներկայացուցչության գործունեության դադարեցումը (որոշումներ թիվ 1/474Ա, 1/518Ա):
- ***Գրանցվել են*** «Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերության «Խորենացի 1» և «Արաբկիր» մասնաճյուղերը (որոշում թիվ 1/478Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 2 արտարժույթի փոխանակման կետերի, 2 փակ բաժնետիրական ընկերություններին, 1 գրավատան նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 4150000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/465Ա, 1/503Ա, 1/466Ա, 1/467Ա, 1/488Ա) և 1 գրավատան, 2 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/487Ա, 1/489Ա, 1/520Ա):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ
21 հունիսի 2016 թ. թիվ 100-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
30 հունիսի 2016 թ. թիվ 102-Ն

ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի մայիսի 5-ի թիվ 106-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի մայիսի 14-ի թիվ 302-Ն հրամանով հաստատված համատեղ որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին*

Նպատակ ունենալով

կարգավորել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից հաճախորդների բանկային հաշիվներին առկա միջոցների արգելադրման և արգելանքից հանելու գործընթացում ուղարկվող հաղորդագրությունների պահպանման հետ կապված հարաբերությունները,

հիմք ընդունելով

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.2-րդ հոդվածը,

ղեկավարվելով

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի N224-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 1-ին ենթակետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ո ր ո շ ու մ ե ն .

1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի մայիսի 5-ի «Բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների արգելադրման էլեկտրոնային համակարգի գործողության կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 106-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի մայիսի 14-ի «Բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների արգելադրման էլեկտրոնային համակարգի գործողության կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 302-Ն հրամանով հաստատված «Բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների արգելադրման էլեկտրոնային համակարգի գործողության կարգը և պայմանները հաստատելու մասին» համատեղ որոշման (այսուհետ՝ համատեղ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունը.

1) Համատեղ որոշմամբ հաստատված «Բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների արգելադրման էլեկտրոնային համակարգի գործողության կարգը և պայմանները» կարգում (այսուհետ՝ Կարգ) լրացնել նոր Գլուխ 11՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 11. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

52. Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեխնիկածրագրային միջավայրով կամ սույն կարգի 49-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն Կենտրոնական բանկի համար Սի-Բի-էյ-Նեթ ցանցում գրանցված հատուկ փոստային արկղին՝ Հարկային մարմնի և (կամ) Առևտրային բանկերի կողմից արգելադրման գործընթացի հետ կապված փոխանցված բոլոր հաղորդագրությունները և դրանցում նշված ամբողջ տեղեկատվությունը կարող են գրանցվել և պահպանվել Կենտրոնական բանկի կողմից, այդ նպատակով վարվող արկղերում (այսուհետ՝ **սև արկղ**): Ընդ որում՝

1) էլեկտրոնային համակարգի միջոցով փոխանցվող հաղորդագրությունները, ինչպես նաև Սի-Բի-էյ-Նեթ համակարգչային ցանցի միջոցով փոխանցվող հաղորդագրությունները պահպանվում են համապատասխանաբար դրանցից յուրաքանչյուրի համար կիրառվող **սև արկղերում**,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.07.2016 թ. (ՀՀԳՏ N15 (558)[1], 22.07.2016):

2) **սև արկղերում** պահպանվում են միայն Կենտրոնական բանկին տրամադրած, կամ վերջինիս ուղարկած Հաղորդագրություններում առկա տեղեկատվությունները,

3) **սև արկղերում** գրանցված տեղեկատվությունը Կենտրոնական բանկի կողմից արխիվացվում և պահպանվում է նվազագույնը 5 տարի ժամկետով:

53. Կենտրոնական բանկի կողմից **սև արկղերում** պահպանված տեղեկատվությունը կարող է տրամադրվել Հարկային մարմնին և (կամ) Բանկերին, եթե այդ տեղեկությունն անհրաժեշտ է Հարկային մարմնի և (կամ) Բանկերի միջև առաջացած վեճերի հետ կապված որպես ապացույց ներկայացնելու համար: **Սև արկղերում** պարունակվող տեղեկությունները Կենտրոնական բանկը կարող է օգտագործել նաև Հարկային արգելադրումների հետ կապված Բանկի գործողությունների ստուգման, ինչպես նաև հաճախորդների բողոքների ստուգման նպատակով:

54. **Սև արկղերից** տվյալների ստացման և կիրառման նպատակով համապատասխան Բանկը կամ Հարկային մարմինը Կենտրոնական բանկ են ներկայացնում դիմում, որտեղ պետք է նշվի.

1) Դիմող կողմի (Բանկ կամ Հարկային մարմին) անվանումը, տվյալները,

2) **սև արկղերից** տվյալների ստացման պատճառը,

3) հարկային արգելադրման մասին որոշման համարը,

4) հարկ վճարողի անվանումը և ՀՎՀՀ-ն,

5) այն ժամանակահատվածը (ամսաթիվը, ժամը), որի ընթացքում փոխանցվել են տվյալ որոշման հետ կապված հաղորդագրությունները, և անհրաժեշտ է իրականացնել վերջիններիս որոնումը:

55. Յուրաքանչյուր Բանկ և Հարկային մարմինը կարող են ստանալ միայն իր կողմից ստացված և իր կողմից ուղարկված Հաղորդագրություններում պարունակվող տվյալների վերաբերյալ տեղեկատվություն:»:

2) Կարգը 35-րդ կետից հետո լրացնել նոր 35.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«35.1. Յուրաքանչյուր Բանկ և Հարկային մարմինը իրականացնում են իրենց կողմից փոխանցված և ստացված Հաղորդագրությունների և դրանցում առկա տեղեկատվության պահպանումը նվազագույնը 5 տարի ժամկետով»:

2. Համատեղ որոշման 2-րդ կետում «2016 թվականի հունիսի 30-ից» բառերը փոխարինել «2017 թվականի սեպտեմբերի 4-ից» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
23 հունիսի 2016 թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դ. ՀՈՎՍԵՓՅԱՆ
30 հունիսի 2016 թ.

«Հարկադիր կատարողի կողմից պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում պարտապանի ունեցած դրամական միջոցների վրա արգելանք դնելու նպատակով բանկերին ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների ձևերը» սահմանելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 520-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին[*]

Հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ և 47-րդ հոդվածի 2-րդ մասերը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 72-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Սահմանել «Հարկադիր կատարողի կողմից պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում պարտապանի ունեցած դրամական միջոցների վրա արգելանք դնելու նպատակով բանկերին ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների ձևերը»՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Սահմանել, որ պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում պարտապանի ունեցած դրամական միջոցների վրա արգելանք դնելու նպատակով բանկերին ուղարկվում է բացառապես սույն որոշմամբ սահմանվող ձևերով էլեկտրոնային հաղորդագրություններ:
3. Սահմանել, որ բանկերը պարտավոր են չարգելադրել պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում պարտապանի ունեցած դրամական միջոցները սույն որոշմամբ սահմանվող ձևերից տարբերվող այլ ձևերով կամ թղթային ձևերով ուղարկված արգելադրման հաղորդագրությունները:
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Հարկադիր կատարողի կողմից պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում պարտապանի ունեցած դրամական միջոցների վրա արգելանք դնելու նպատակով բանկերին ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների ձևերը» սահմանելու մասին» թիվ 520-Ն որոշումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 10-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
23 հունիսի 2016 թ., N 104-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. հունիսի 21-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.07.2016 թ. (ՀՀԳՏ N15 (558)[1], 22.07.2016):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2016 թվականի հունիսի 21-ի թիվ 104-Ն որոշմամբ

Ձև 1

Հաղորդագրություն թիվ _____
(ունիկալ համար)

ՈՐՈՇՈՒՄ _____

ՊԱՐՏԱՊԱՆԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԱՐԳԵԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

__ _____ 20__ թ. ք. _____

ԴԱՀԿ ծառայության _____ բաժնի _____(բաժանմունքի)

_____ ուսումնասիրելով
(պաշտոնը, անունը, ազգանունը)

_____-ի
(կիրառող մարմին, ամսաթիվ, համար, տեսակ՝ կատարողական թերթ կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտ)

հիման վրա 20__ թ. հարուցված թիվ _____ կատարողական վարույթի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

(կատարողական թերթի պահանջը կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտի պահանջը)
_____
_____
_____
_____

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 46, 47 և 67-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. _____ _____ _____ ընդհանուր գումարով դրամական միջոցների չափով
(գումարը թվերով) (գումարը տառերով) (արժույթը)

1.1. դրամական միջոցների _____%-ի չափով*

* *Եթե գումար նշված չէ, նշվում է դրամական միջոցների %-ի չափը:*

1.2. _____ բանկային հաշվի (հաշիվների) վրա առկա դրամական միջոցների ____%-ի
(նշվում է բանկային հաշվի համարը)

չափով արգելանք դնել պարտապան
_____
(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանք (առկայության դեպքում), բնակության վայրը, իրավաբանական անձի անվանումը, իրավաբանական անձի տեսակը՝ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ, ռեզիդենտի դեպքում ՀՎՀՀ, ոչ ռեզիդենտի դեպքում գրանցման համար, գտնվելու վայրը)

_____-ի բանկային հաշիվներում առկա և դեռևս չարգելադրված

դրամական միջոցների վրա, որից _____ _____ դրամական միջոցները՝
(գումարը թվերով) (գումարը տառերով)

որպես կատարողական թերթով նախատեսված գումար և _____ _____
(գումարը թվերով) (գումարը տառերով)

դրամական միջոցները՝ որպես կատարողական ծախսեր:

2. Բանկի անվանումը _____

Պարտապանի բանկային հաշիվներում դրամական միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում արգելանք դնել պարտապանի այլ բանկային հաշիվներում, ավանդներում, «դեպո» հաշիվներում (ենթապահառուի գործառույթներ իրականացնող գործակալների/դիլերների կողմից վարվող «դեպո» հաշիվներ), ինչպես նաև մետաղական հաշիվներում առկա և դեռևս չարգելադրված դրամական միջոցների վրա՝ մինչև սույն որոշման 1-ին կետում նշված չափով ընդհանուր գումարի ապահովումը:

3. Պարտապանի բանկային հաշիվներում, ավանդներում, «դեպո» հաշիվներում դրամական միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում տեղեկացնել բանկում պահվող այլ ակտիվների առկայության մասին (արժեքը չի նշվում) և արգելանք դնել դրանց վրա:

4. Պարտապանի բանկային հաշիվների ներքո բացել ներքին ենթահաշիվներ, և դրանք մուտքագրել _____ հաշվի համար(ներ)ից ստացված և

(նշվում են բանկային հաշվի համարները)

արգելադրված, ինչպես նաև հետագայում ստացվող միջոցները, ինչպես նաև պետական աջակցության հատուկ հաշիվներից (որոնք արգելադրման ենթակա չեն) ստացված կամ հետագայում ստացվող միջոցները: Սույն կետով նախատեսված ենթահաշիվները սպասարկվում են համապատասխան բանկային կամ այլ հաշվի բացման և սպասարկման պայմանագրի հիման վրա՝ նույն պայմաններով ու կարգով, առանց որևէ լրացուցիչ վճարի գանձման, ընդ որում, ենթահաշիվներին մուտքագրված գումարները պարտապանը կարող է կանխիկացնել կամ այլ կերպ ազատ տնօրինել բանկի և դրա մասնաճյուղերի տարածքում, իսկ հնարավորության դեպքում՝ նաև համապատասխան բանկային հաշվի համար տրված վճարային քարտի միջոցով (վճարային քարտով վճարումները կարող են իրականացվել բացառապես ենթահաշվի միջոցով):

5. Տեղեկացնել պարտապանի բանկային հաշվին կամ ավանդներին (ներառյալ՝ նոր բացված) հետագայում մուտքագրվող դրամական միջոցների (բացառությամբ սույն որոշման 4-րդ կետով նախատեսված ենթահաշիվներին մուտքագրվող միջոցների), ինչպես նաև արգելանքից ազատվող այն դրամական միջոցների մասին, որոնք արգելադրված են եղել արգելանք դնելու մասին այլ որոշում(ներ)ով (նշելով գումարի չափը), և արգելանք դնել դրանց վրա՝ մինչև սույն որոշման 1-ին կետում նշված չափով ընդհանուր գումարի ապահովումը: Մուտքագրվող միջոցները ենթակա են արգելադրման_____:**

(այո, ոչ)

** *«Այո» չի կարող նշվել, եթե 1-ին կետում նշվել է դրամական միջոցների %-ի չափ:*

6. Արժեթղթերի հաշվարկի համար հիմք է ընդունվում դրանց անվանական արժեքը:

7. Պարտապանի արտարժութային միջոցների արգելանքի դեպքում արգելադրվում է տվյալ հաշվի արժույթով:

8. Մինչև արգելանք դնելը սույն որոշման մասին պարտապանին տեղեկացնելու դեպքում բանկը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:

9. Նախկինում միևնույն անձի վերաբերյալ միևնույն կատարողական վարույթի համարով կայացված որոշումները ուժը կորցրած են ճանաչվում սույն որոշման ստացման պահից:

Որոշման պատճենն ուղարկել կողմերին, բանկին:

Որոշումը կարող է բողոքարկվել _____ դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Հարկադիր կատարող _____ _____
(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Հաղորդագրություն թիվ _____

ՈՐՈՇՈՒՄ _____

ՊԱՐՏԱՊԱՆԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

__ _____ 20__ թ. ք. _____

ԴԱՀԿ ծառայության _____ բաժնի _____ (բաժանմունքի)

_____ ուսումնասիրելով
(պաշտոնը, անունը, ազգանունը)

_____-ի
(կիրառող մարմին, ամսաթիվ, համար, տեսակ՝ կատարողական թերթ կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտ)

հիման վրա 20__ թ. հարուցված թիվ _____ կատարողական վարույթի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

(կատարողական թերթի պահանջը կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտի պահանջը)
_____
_____
_____
_____

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 46, 47 և 67-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. _____ _____ ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով,
(գումարը թվերով) *(գումարը տառերով)*

1.1. դրամական միջոցների _____%-ի չափով*

** եթե գումար նշված չէ, նշվում է դրամական միջոցների %-ի չափը:*

1.2. _____ բանկային հաշվի (հաշիվների) վրա դրամական միջոցների ___%-ի չափով
(նշվում է բանկային հաշվի համարը)

բռնագանձում տարածել պարտապան՝

_____
(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանք (առկայության դեպքում), բնակության վայրը, իրավաբանական անձի անվանումը, իրավաբանական անձի տեսակը՝ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ, ռեզիդենտի դեպքում ՀՎՀՀ, ոչ ռեզիդենտի դեպքում՝ գրանցման համար, գտնվելու վայրը)

_____-ի՝ թիվ _____ հաղորդագրությամբ

արգելադրված դրամական միջոցների, ինչպես նաև բանկային հաշիվներում և ավանդներում առկա և մինչև սույն կատարողական վարույթը չարգելադրված, ինչպես նաև հետագայում մուտքագրվող (ներառյալ՝ նոր բացված հաշիվներին կամ ավանդներին) դրամական միջոցների (բացառությամբ՝ սույն որոշման 2-րդ կետով նախատեսված ենթահաշիվներին մուտքագրվող միջոցների) վրա, որից

_____ _____ ՀՀ դրամը որպես կատարողական թերթով նախատեսված՝
(գումարը թվերով) *(գումարը տառերով)*

բռնագանձման ենթակա գումար և

_____ _____ ՀՀ դրամը՝ որպես կատարողական ծախսեր:
(գումարը թվերով) *(գումարը տառերով)*

2. Պարտապանի բանկային հաշիվների ներքո բացել ներքին ենթահաշիվներ և դրանց մուտքագրել _____ հաշվի համար(ներ)ից ստացված և արգելադրված,

(նշվում են բանկային հաշվի համարները)

ինչպես նաև հետագայում ստացվող միջոցները, ինչպես նաև պետական աջակցության հատուկ հաշիվներից (որոնք արգելադրման ենթակա չեն) ստացված կամ հետագայում ստացվող միջոցները: Սույն կետով նախատեսված ենթահաշիվները սպասարկվում են համապատասխան բանկային կամ այլ հաշվի բացման և սպասարկման պայմանագրի հիման վրա՝ նույն պայմաններով ու կարգով, առանց որևէ լրացուցիչ վճարի գանձման, ընդ որում, ենթահաշիվներին մուտքագրված գումարները պարտապանը կարող է կանխիկացնել կամ այլ կերպ ազատ տնօրինել բանկի և դրա մասնաճյուղերի տարածքում, իսկ հնարավորության դեպքում՝ նաև համապատասխան բանկային հաշվի համար տրված վճարային քարտի միջոցով (վճարային քարտով վճարումները կարող են իրականացվել բացառապես ենթահաշվի միջոցով):

3. Բանկի անվանումը _____

սույն որոշման 1-ին կետով նախատեսված դրամական միջոցները փոխանցել _____ գանձապետական բաժանմունքի ԴԱՀԿ _____ բաժնի _____ հաշվին:

4. Եթե սույն կատարողական վարույթի հետ կապված՝ բանկում կան պարտապանի արգելադրված միջոցներ, ապա սույն որոշման 1-ին կետով նախատեսված ընդհանուր գումարը բռնագանձելուց հետո _____ ազատել արգելանքից:

(նշվում է գումարի չափը)

5. Պարտապանի տվյալներում անճշտություններ հայտնաբերելու դեպքում անհապաղ հայտնել ԴԱՀԿ ծառայությանը: Մինչև բռնագանձում տարածելը սույն որոշման մասին պարտապանին տեղեկացնելու դեպքում բանկը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:

6. Նախկինում միևնույն անձի վերաբերյալ միևնույն կատարողական վարույթի համարով կայացված որոշումները ուժը կորցրած են ճանաչվում սույն որոշման ստացման պահից:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին, բանկին:

Որոշումը կարող է բողոքարկվել _____ դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Հարկադիր կատարող _____ _____

(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Հաղորդագրություն թիվ _____

ՈՐՈՇՈՒՄ ____

ՊԱՐՏԱՊԱՆԻ ԱՐԳԵԼԱԴՐՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՄ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԱՐԳԵԼԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բանկի անվանումը _____ ԴԱՀԿ ծառայության _____ բաժնի _____ (բաժանմունքի)

_____ ուսումնասիրելով
(պաշտոնը, անունը, ազգանունը)

_____-ի
(կիրառող մարմին, ամսաթիվ, համար, տեսակ՝ կատարողական թերթ կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտ)

հիման վրա 20__ թ. հարուցված թիվ _____ կատարողական վարույթի հետ կապված

ՊԱՐԶԵՑԻ

(կատարողական թերթի պահանջը կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտի պահանջ և արգելանքը մասնակի կամ ամբողջությամբ վերացնելու հիմքը)

_____
_____
_____
_____

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 46, 47 և 67-րդ հոդվածներով _____ և/կամ 44.1-րդ հոդվածի կետով՝

ՈՐՈՇԵՑԻ ՎԵՐԱՑՆԵԼ ԱՐԳԵԼԱՆՔԸ

Պարտապան՝ _____
(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանք (առկայության դեպքում), բնակության վայրը, իրավաբանական անձի անվանումը, իրավաբանական անձի տեսակը՝ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ, ռեզիդենտի դեպքում՝ ՀՎՀՀ, ոչ ռեզիդենտի դեպքում՝ գրանցման համար, իրավաբանական անձի գտնվելու վայրը)

_____ թիվ _____

հաղորդագրությամբ արգելադրված միջոցների_____այդ թվում՝
(մասնակի/ամբողջությամբ)

_____ _____ _____
(գումարը թվերով) *(գումարը տառերով)* *(արժույթը)* *

_____ _____ _____
(գումարը թվերով) *(գումարը տառերով)* *(արժույթը)*

Արժեթղթեր «դեպո» հաշիվներից՝

_____ _____ _____
(գումարը թվերով) *(գումարը տառերով)* *(արժույթը)*

_____ _____
(անվանական արժեքը թվերով) *(անվանական արժեքը տառերով)*

Բանկում առկա ի պահ տրված այլ ակտիվներից արգելանքը վերացնելու մասին (արժեքը չի նշվում)

_____
(արգելանքը վերացնել)

Գումարը լրացնելու նպատակով պարտապանի հաշիվների վրա հետագայում մուտքագրված դրամական միջոցներից, որոնց վրա արգելանք է դրվել

_____
(արգելանքը վերացնել)

** Տարբեր արժույթներով արգելադրման դեպքում ավելացվում են տողեր և նշված տեսքով լրացվում բոլոր արժույթների համար: Որոշման պատճենն ուղարկել կողմերին, բանկին: Որոշումը կարող է բողոքարկվել դատարան կամ վերադասության կարգով որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում: «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:*

Հարկադիր կատարող _____ _____
(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Հաղորդագրություն թիվ _____

Ի պատասխան թիվ _____ հաղորդագրության

ՊԱՐՏԱՊԱՆԻ ԱՐԳԵԼԱԴՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բանկի անվանումը _____ ԴԱՀԿ ծառայության _____ բաժնի _____ (բաժանմունքի) _____ ուսումնասիրելով
(պաշտոնը, անունը, ազգանունը)

_____-ի
(կիրառող մարմին, ամսաթիվ, համար, տեսակ՝ կատարողական թերթ կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտ)

«_____» հիման վրա 20__ թ. հարուցված թիվ _____ կատարողական վարույթի հետ կապված հայտնում ենք, որ

Պահանջվում էր արգելադրել

_____ _____ _____ ընդհանուր գումարով դրամական միջոցներ
(գումարը թվերով) *(գումարը տառերով)* *(արժույթը)*

/դրամական միջոցների _____%-ի չափով/ *

** Եթե գումար նշված չէ, նշվում է դրամական միջոցների %-ի չափը:*

_____ բանկային հաշվի (հաշիվների) վրա դրամական միջոցների _____%-ի չափով:
(նշվում է բանկային հաշվի համարը):

Պարտապան՝_____
(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանք (առկայության դեպքում), բնակության վայրը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում), իրավաբանական անձի անվանումը, իրավաբանական անձի տեսակը՝ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ, ռեզիդենտի դեպքում ՀՎՀՀ, ոչ ռեզիդենտի դեպքում գրանցման համար, իրավաբանական անձի գտնվելու վայրը)

_____

«__»_____ 20__ թ. դրությամբ

ԱՐԳԵԼԱԴՐՎԵԼ Է

_____ _____ _____ ընդհանուր գումարով դրամական միջոցներ, որից
(գումարը թվերով) *(գումարը տառերով)* *(արժույթը)*

_____	_____	_____	_____
Փոխարժեքը	*(գումարը թվերով)*	*(գումարը տառերով)*	*(արժույթը)**
_____	_____	_____	_____
Փոխարժեքը	*(գումարը թվերով)*	*(գումարը տառերով)*	*(արժույթը)**
_____	_____	_____	_____
Փոխարժեքը	*(գումարը թվերով)*	*(գումարը տառերով)*	*(արժույթը)**

Արժեթղթեր «դեպո» հաշիվներից** _____ _____
(անվանական արժեքը թվերով) *(անվանական արժեքը տառերով)*

Եթե գումարը չի բավարարում, նշվում է.

Բանկում ի պահ տրված այլ ակտիվների առկայության և արգելադրման մասին (արժեքը չի նշվում) ___ _____
(այո, ոչ)

* *Տարբեր արժույթներով արգելադրման դեպքում ավելացվում են տողեր և նշված տեսքով լրացվում են բոլոր արժույթների համար:*

** *Ենթապահառուի գործառույթներ իրականացնող գործակալների/դիլերների կողմից վարվող «դեպո» հաշիվներ:*

Պարտապանի նկատմամբ առկա է նաև _____ (նշել վարույթի թիվը) վարույթով արգելանքի պահանջ:

Գումարը չի արգելադրվել, քանի որ նշված պարտապանի անձնական տվյալներում առկա են հետևյալ անճշտությունները՝

Սխալ տվյալներ _____

Չարգելադրված միջոցները բացակայում են _____ (թիվ _____ հաղորդագրության (հաղորդագրությունների) հիման վրա առկա են _____ արգելադրված դրամական միջոցներ)
(նշվում է գումարի չափը)

Հաշվեհամարը բացակայում է _____

Այլ (նշել) _____

Բանկի վարչության նախագահ _____ _____ Կ.Տ.
(գործադիր տնօրեն) *(ստորագրություն)*

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Ձև 5

Հաղորդագրություն թիվ _____

Ի պատասխան թիվ _____ հաղորդագրության

ՊԱՐՏԱՊԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բանկի անվանումը _____ ԴԱՀԿ ծառայության _____ բաժնի
_____ (բաժանմունքի)
_____ ուսումնասիրելով
(պաշտոնը, անունը, ազգանունը)
_____-ի
(կիրառող մարմին, ամսաթիվ, համար, տեսակ՝ կատարողական թերթ կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտ)

«___» հիման վրա 20__ թ. հարուցված թիվ _____ կատարողական վարույթի հետ կապված հայտնում ենք, որ «__» _____ 20__ թ. դրությամբ

ՓԱՍՏԱՑԻ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ Է

_____ _____ ընդհանուր գումարով ՀՀ դրամ և փոխանցվել
(գումարը թվերով) *(գումարը տառերով)*
_____ գանձապետական բաժանմունքի ԴԱՀԿ _____
բաժնի _____ հաշվին

Եթե բռնագանձվող գումարը չի բավարարում, նշվում է պակաս բռնագանձված գումարը
_____ _____ ՀՀ դրամ
(գումարը թվերով) *(գումարը տառերով)*

Պահանջվում էր բռնագանձել
_____ _____ ընդհանուր գումարով ՀՀ դրամ:
(գումարը թվերով) *(գումարը տառերով)*

Պարտապան՝ _____
(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, ՀՎՀՀ կամ ՀՎՀՀ չունենալու մասին տեղեկանք (առկայության դեպքում), բնակության վայրը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում), իրավաբանական անձի անվանումը, իրավաբանական անձի տեսակը՝ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ, ռեզիդենտի դեպքում ՀՎՀՀ, ոչ ռեզիդենտի դեպքում գրանցման համար, իրավաբանական անձի գտնվելու վայրը)
_____

Պարտապանի նկատմամբ առկա է նաև _____ (նշել վարույթի թիվը) վարույթով բռնագանձման պահանջ:

Գումարը չի բռնագանձվել, քանի որ նշված պարտապանի անձնական տվյալներում առկա են հետևյալ անճշտությունները.
Սխալ տվյալներ _____

Չարգելադրված միջոցները բացակայում են _____ (թիվ _____ հաղորդագրության (հաղորդագրությունների) հիման վրա առկա են _____ արգելադրված դրամական միջոցներ)
(նշվում է գումարի չափը)

Հաշվեհամարը բացակայում է _____
Այլ (նշել) _____

Բանկի վարչության նախագահ _____
(գործադիր տնօրեն) *(ստորագրություն)* Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի ապրիլի 8-ի թիվ 79-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով

կարգավորել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության ճանապարհային ոստիկանության վարչական տույժերի (տուգանքների) դիմաց վճարումների ընդունման գործընթացում կիրառվող հաղորդագրությունների պահպանման հետ կապված հարաբերությունները,

հիմք ընդունելով

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը,

ղեկավարվելով

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի Հանրապետության Ոստիկանության ճանապարհային ոստիկանության վարչական տույժերի, տուգանքների հաշվառման տեղեկատվական համակարգից տվյալներ ստանալու և վճարումների կատարման համար այդ տվյալները պարտադիր ստուգելու կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 79-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Ոստիկանության ճանապարհային ոստիկանության վարչական տույժերի, տուգանքների հաշվառման տեղեկատվական համակարգից տվյալներ ստանալու և վճարումների կատարման համար այդ տվյալները պարտադիր ստուգելու կարգում և պայմաններում» (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կարգի 28-րդ կետում ուժը կորցրած ճանաչել 1-ին, 2-րդ, 4-րդ ենթակետերը և 3-րդ ենթակետի «ա» պարբերությունը:

2) Կարգի 29-րդ կետում ուժը կորցրած ճանաչել 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերը, 4-րդ ենթակետի «ա» պարբերությունը և 6-րդ ենթակետի «դ» պարբերությունը:

3) Կարգի 29-րդ կետում 6-րդ ենթակետի «զ» պարբերության «գումարը» բառից հետո լրացնել հետևյալ բառերը. «և ճՈ հաշվին դեռ չմուտքագրված գումարը, ըստ «ճՈ տույժերի, տուգանքների համակարգում» վերջինիս համար կիրառված սկզբունքի:»:

4) Կարգի 29-րդ կետը լրացնել նոր 7-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. «7) Խախտման ունիկալ իդենտիֆիկատորը ճանապարհային ոստիկանության համակարգում»:

5) Կարգի 30-րդ կետում 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) Հաղորդագրության ունիկալ համարը»:

6) Կարգի 30-րդ կետում ուժը կորցրած ճանաչել 2-րդ, 4-րդ, 5-րդ ենթակետերը և 3-րդ ենթակետի «ա» պարբերությունը:

7) Կարգի 30-րդ կետում 6-րդ ենթակետի «ա» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ա) Պարտավորության դիմաց վճարված փաստացի գումարը, ՀՀ դրամ (որը փոխանցվելու է գանձապետական հաշվին)»:

8) Կարգի 30-րդ կետում 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «7) Խախտման ունիկալ իդենտիֆիկատորը ոստիկանության համակարգում, որը նշված է ստացված պատասխան հաղորդագրության (թիվ 2) մեջ»:

9) Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի առաջին նախադասության մեջ «կարող է» բառից հետո լրացնել հետևյալ բառերը. «ըստ ստացված պատասխան հաղորդագրության (թիվ 2) տվյալների, Ֆինանսական կազմակերպության հայեցողությամբ»:

10) Կարգի 32-րդ կետում 2-րդ ենթակետի «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «բ) Որոշման համաձայն ընդհանուր պարտավորության գումարը»:

11) Կարգի 32-րդ կետում 2-րդ ենթակետի «գ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «գ) Խախտման ունիկալ իդենտիֆիկատորը ոստիկանության համակարգում»:

12) Կարգը 34-րդ կետից հետո լրացնել նոր 34.1, 34.2, 34.3, 34.4-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. հունիսի 21-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.07.2016 թ. (ՀՀՊՏ N15 (558)[1], 22.07.2016):

«34.1. «Հարցում առկա վարչական տույժերի վերաբերյալ» հաղորդագրության մեջ (Կարգի 28-րդ կետի 5-րդ ենթակետում) պարտապանի Հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ) կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համարը առանձին դաշտով կարող է ավելացվել՝ հարցում կատարելու համար և կիրառվել Ճանապարհային ոստիկանության կողմից այդ տվյալի մշակման հնարավորության ապահովման դեպքում:

34.2. Հաղորդագրությունների մեջ Հետիոտնի անձը հաստատող փաստաթղթի տեսակը նշելու համար կարող են կիրառվել Կենտրոնական բանկի կողմից էլեկտրոնային ֆինանսական հաղորդագրությունների լրացման կարգով այդ փաստաթղթերի տվյալների համար սահմանված համապատասխան կոդերը:

34.3. Հաղորդագրության մեջ համապատասխան դաշտերում կիրառվող՝ «Խախտման ունիկալ իդենտիֆիկատորը», ինչպես նաև «Տուգանքի, տույժի որոշման համարը» ձևավորվում և կիրառվում է «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգում» դրանց համար սահմանված կառուցվածքի և սկզբունքի համաձայն:

34.4. Յուրաքանչյուր ֆինանսական կազմակերպություն պետք է ապահովի Հաղորդագրությունների փոխանցման ավտոմատացված ծառայության միջոցով իր կողմից կատարված հարցումների և դրանց հետ կապված իր կողմից ստացված, տրամադրված տեղեկատվության պահպանումը՝ նվազագույնը 5 տարի ժամկետով:»:

13) Կարգը 35-րդ կետից հետո լրացնել նոր 35.1, 35.2, 35.3, 35.4 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«35.1. Տեղեկատվության փոխանցման համար կիրառվող տեխնիկածրագրային լուծումները պետք է ապահովեն սույն կետով սահմանված տվյալների վերաբերյալ էլեկտրոնային գրառումների առկայությունը, որոնք առանձին դաշտով կարող են առկա չլինել հաղորդագրության կառուցվածքում.

1) հաղորդագրության ունիկալությունը ապահովող տվյալներ (ունիկալ համարը),
2) հաղորդագրության ուղարկման ամսաթիվը, ժամը,
3) ուղարկող կողմին նույնականացնող տվյալները,
4) ստացող կողմին նույնականացնող տվյալները:

35.2. Հաղորդագրությունների փոխանցման ավտոմատացված ծառայությունն իրականացնում է նաև վերջինիս միջոցով փոխանցված հարցումների և դրանց ի պատասխան տրամադրված (փոխանցված) ամբողջ տեղեկատվության պահպանումը (այսուհետ՝ սև արկղում պահպանվող տեղեկատվություն) նվազագույնը 5 տարի ժամկետով: Ընդ որում.

